

Handwritten text in Arabic script, possibly a date or reference number.

Handwritten text in Arabic script, possibly a date or reference number.

Handwritten text in Arabic script, possibly a date or reference number.

Handwritten text in Arabic script, possibly a date or reference number.

Handwritten text in Arabic script, possibly a date or reference number.

Handwritten text in Arabic script, possibly a date or reference number.

Handwritten text in Arabic script, possibly a date or reference number.

ԳԻՐԿԸ

Գրքի ԳԻՐԿԸ - պատրիարքական

Մասի 12

Մատենադարանի

1907 թ

Հայրենի 20/4

9340



Ա. Պ. Ս. Մ. Ա. Պ. Ի

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ

(ՅԱՒԵՂՈՒԱԾՈՎ)

Յարմարեցրած նորոսների համար

Կազմեց ՅՆՀԵՆ-ՍԻՄՈՆ

ԵՐՐՈՐԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս 3

Ա. Խ. Ա. Լ. Յ. Ի. Ա.

Տպարան Խորեն Ասմարեանցի || Типограф Хорена Х. Асмарова.

1906

Համ-ը Ա. Յակոբյանի պրոէկտի Ա.
Յակոբյանի ցրէ:



22

Дозволено цензурою Тифлисы, 20-го Июля 1906 г.

Ըստ բարձու հրամանի Նորին Ս. Օծութեան Վե-
հափառ Հայրապետի: ԵՑ-ն յուլիսի 1902 ամի,
ի Ա. Էջմիածին:





- Ա. Դպիրների ըստին
- Բ. Սպասաւորների ըստին
- Գ. Յաւելուած



Կ Պ Ի Ր Ն Ե Ր Ի Բ Ա Ճ Ի Ն

Ա.

Քահանայի զգեստաւորելու ժամանակ.

Խորհուրդ խորին անհաս անըսկիցքն, |
 Ար զարդարեցեր զվերին պետութիւնդ
 Ի յառագաստ անմատոյց լուսոյն
 Գերապանձ փառօք զգասս հրեղինաց:

Անճառահարաչ զօրութեամբ
 Ստեղծեր զկրօն պատկեր տիրական
 Եւ նազելի փառօք զգեստաւորեցեր
 Ի գրախան աղենի տեղի բերկրանաց:

Չարչարանօք քո սուրբ Միածնին
 Նորոգեցան արարածք ամենայն
 Եւ վերըստին մարդն անմահացաւ
 Զարդարեալ ի զգեստ անկողսպտելի:

Անձրեւածին բաժակ հրահոսան,
 Ար հեղեր յառաքեալսն ի սուրբ վերնատանն,

ԽԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Տեղեւ գործածողներէց ինդրուով յամեն
 էրենց նկատողութիւնները թերութիւններէ մասին էրեն՝ կազմողին,
 որպէս զի հետեւեալ տպագրութեան ժամանակ ի նկատի առնուի:

Հէղ և ի մեզ Հոգիդ սուրբ Աստուած
Ընդ պատմուհանի քո զիմաստութիւն:

Տան քում վայել է սրբութիւն,
Որ ըզգեցար ըզվայելչութիւն,
Սրբութիւն փառաց ընդ մէջ քո ածեալ,
Պատեա զմէջս մեր ճըշմարտութեամբ:

Որ զարարչագործ բազուկս քո
Տարածեցեր ընդդէմ աստեղաց,
Հաստատեա՛ զբազուկս մեր կարողութեամբ՝
Համբարձմամբ ձեռաց առ քեզ միջնորդել:

Իլևսմամբ թագ ի գլուխ պատեսցես
Զմիտս և ըզգայարանս,
Խաչանիշ ուրարմամբ ըստ Ահարովնի՝
Ծաղկեալ ոսկեթել ի զարդ խորանի:

Բամից բոլորից տիրապէս Աստուած-
Պետական նափորտնապատ սիրովդ
Զմեզ զգեստաւորեցեր՝
Քում սուրբ խորհրդոյդ լինել սպասաւոր:

Թագաւոր երկնաւոր,
Զեկեղեցի քո անշարժ պահեա,
Եւ զերկրրպագուս անուանըդ քում՝
Պահեա ի խաղաղութեան:

Մ Ե Ղ Ե Դ Ի Ն Ե Ր

ՆԱԽ ՔԱՆ ՄԵՂԵԴԻՆ.

ա) Ընտրեալդ Աստուծոյ,
Ո՛վ երջանիկ սուրբ Հայրապետ:

բ) Յորժամ մըտցես ի սուրբ խորան,
Անդ լիշեսցես զմեր նընջեցեալսն:
Յորժամ առնես զպատարագս,
Յիշեա և զիս զբազմամեղս:



ՇԻՆՍՐԱՆ, ԺՆՆԳԵԱՆ, ԸՍՏՈՒՆԹՈՒՆԻ.

Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ
Ծաւալանայր յառաւօտուն՝
Երկու փայլակնաձեւ արեգական նման:

ՅԵՐՈՒԹԵԱՆ, ԵԿԵՂԵՑԻՈՅ, ԿԻՐՈՎԻՆԵՐԻ.


Այսօր մեռեալք ընդ կենդանեացս
Զայնէին՝ աւետիս, յարեալ Քրիստոս:

Այսօր հարսըն լուսոյ
Զգեցեալ ծիրանի՛ արեամբ գեղեցիկ:

ԿԻՒՐԱԿԷՆՆԵՐԻ ԵՒ ԾԱՂԿԱԶԱՐԴԻ.

Ի կոյս վիմէն յարեալ այսօր
Եւ զգերեալըն ի գերողէն ազատեաց:

Յիսուս Քրիստոս եմուտ այսօր
Ի սուրբ քաղաքն Երուսաղէմ
Ովսաննա երգով:



Ս Ր Բ Ո Յ Տ Օ Ն Ե Ր Ի Ն.

Յայս յարկ նուիրանաց
Ուխտի տեառն տաճարիս,
Ժողովեալքս աստանոր ի խորհուրդ պաշտման
Պաղատանաց առաջիկայ սուրբ պատարագիս,
Խընկօք անուշիւք խումբ առեալ պարեմք
Ի Վերնայարկ սրահըս խորանիս.
Ուղղութեամբ ընկալ զաղօթս մեր,
Որպէս բուրումն անուշահոտ
Խընկոց, ստաշխից և կինամօնաց:
Եւ զմատուցողս պահեա սըբութեամբ
Միշտ և հանապազ քեզ սպասաւորել:

Բարեխօսութեամբ մօր քո և կուսի
Ընկալ զաղաչանս քոց պաշտօնէից:
Որ գերագոյն քան զերկինքս պայծառացուցեր
Սուրբ զեկեղեցի արեամբ քով Քրիստոս:
Եւ ըստ երկնայնոցըն կարգեցեր ի սմա
Զդասս առաքելոց և մարգարէից,
սուրբ վարդապետաց:

Այսօր ժողովեալ դասք քահանայից,
Սարկաւագաց, դպարաց և կղերիկոսաց:
Խունկ մատուցանեմք առաջի քո Տէր,
Յօրինակ ըստ հնումըն Զաքարիայ:
Ընկալ առ ի մէնջ զխնկանուէր մաղթանս,
Որպէս զպատարագն Աբէլի, զՆոյի և զԱբրահամու:
Բարեխօսութեամբ վերին քո զօրաց
Միշտ անշարժ պահեա զԱթոռ հայկազնեայց:



+ (Սարգիս-Օրհնեա տէր:
Քահանայ-Օրհնեալ Թաղապետ Իււնն . .

(Ժամամիտ)

Սարկիս-Եւ Լա խաղաղ...*) օրհնեա տէր:
Քհ-Օրհնուլ Իւնն... խաղաղուլ Իւնն ամենեցուն:

Եւ ընդ հոգւոյդ քում:

Սարկիս-Սատուծոյ երկրբ. . .

Առաջի քո տէր:

Քհ-Տէր Աստուած մեր. . .

(Ծաշու շարական)

Սրկի-Օրհնեա տէր:
Քհ-Ձե քո է. . .
Սրկի-Պատկուակ:

Սուրբ Աստուած, սուրբ և հրգօր,

Սուրբ և անմահ, որ յարեար

Ի մեռելոց, ողորմեա մեզ. (3 անգամ)

Որ խաչեցար վասըն մեր (Խաչի եւ սրբոյ արձնիքի)

*) Տես „Սպասաւորներէ բաժին“ երես 30

Որ յայտնեցար վասըն մեր (Յայտնուլեան)
Որ ծընար և յայտնեցար վասըն մեր (Ծննդեան)
Որ եկիր և գալոցդ ես (Ծողիաղարբի)
Որ համբարձար փառօք առ Հայր (Հալբարջան)
Որ եկիր և հանգեար յառաքեալսն (Հոգեգալստեան)
Որ յայտնեցար ի Թափոր լերին (Վարդապետի)
Որ եկիր ի փոխումն մօր քո և կուսի (Աստուածածնի վերաբ.)
Որ մարմնացար վասըն մեր (Ս. պատկ.):

Սրկի-Եւ Լա խաղաղուլ. . .



Տէր ողորմեա: (6 անգամ):

Սրկի-Վանն հոգւոյն հանդուց...

Յիշեա տէր և ողորմեա,
Տէր ողորմեա, քեզ տեառնըդ
Յանձն եղիցուք, տէր ողորմեա,
Տէր ողորմեա, տէր ողորմեա:

(Ծաշու գիրք)

Քհ-Խաղաղուլ Իւնն . . .

Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկի-Երկիւղածուլ Թեաւր. . .
Քհ, կամ Սրկի-Սրբոյ աւետարանի . . .

Փառք քեզ տէր Աստուած մեր:

Արև-Պատմաբան:

Ասէ Աստուած:

(Ճաշու անտարան)

Փառք քեզ տէր, Աստուած մեր:

(Հաւատամք)

Արև-Եւ և խաղաղութեան . . .

Տէր ողորմեա:

Արև-Եւ և հաւատով . . .

Կեցո տէր:

Արև-Ձման սուրբ . . .

Ծնորհեա տէր: (± անգամ)

Արև-Եւ և միտքան . . .

Տէր ողորմեա, քեզ տեսանըղ

Յանձն եղիցուք, տէր ողորմեա,

Տէր ողորմեա, տէր ողորմեա:



Արև-Օրհնեա տէր:

Քհ-Որհնեա զե . . . Խաղաղութեան . . .



Եւ ընդ չորսոյդ քում:

Արև-Աստուծոյ երկը . . .

Առաջի քո տէր:

Քհ-Խաղաղութեամբ քով . . .

Արև-Օրհնեա տէր:

Քհ-Տէր Աստուած օրհնեաց . . .

Ամէն:

Արև-Մե ոք յերեսայն . . .



Մարմին տէրունական և արին փրկչական

Կայ առաջի, երկնային զօրութիւնք

յաներևոյթս

Երգեն և ասեն անհանգիստ բարբառով.

Սուրբ, սուրբ, սուրբ տէր զօրութեանց:



ՍՐԱԱՍԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՆՆԿԵԱՆ, ՎԱՐԴԱՎԱՌԻ, ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ.

Բազմութիւնք հրեշտակաց և զօրաց երկնաւորաց
Իջեալ ի յերկնից ընդ Միածին թագաւորին.

Ո՛րք—

Երգէին և ասէին՝ սա է որդին Աստուծոյ,
Ամենեքեան ասասցուք՝ ուրախ լերուք երկինք
Եւ ցընծասցեն հիմունք աշխարհի,
Զի Աստուածն յաւիտենական
Ի յերկրի երևեցաւ և ընդ մարդկան շըրջեցաւ,
Զի կեցուցէ զանձինքս մեր:

ԶԱՏԿԻ ԵՒ ԽԱԶԻ.

Ով է որպէս տէր Աստուած մեր,
Խաչեցաւ վասըն մեր, թաղեցաւ
Եւ յարեաւ—

Հաւատարիմ եղև յաշխարհի և համբարձաւ փառօք,
Եկայք ժողովուրդք, զօրհնութիւն ընդ հրեշտակս
Երգեսցուք նըմա ասելով՝ սուրբ, սուրբ,
Սուրբ ես տէր Աստուած մեր:

ԿԻՒՐԱԿԵՆԵՐԻ, ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ, ԾԱՂԿԱԶԱՐԴԻ.

Հրեշտակային կարգաւորութեամբ +
Լըցեր Աստուած զքո սուրբ զեկեղեցի.
Հազարք—

Հազարաց հրեշտակապետք կան առաջի քո
Եւ բիւրք բիւրոց հրեշտակք պաշտեն ըզքեզ տէր
Եւ ի մարդկանէ հաճեցար ընդունել զօրհնութիւն
Զայնիւ խորհրդականաւ սուրբ, սուրբ,
Սուրբ տէր զօրութեանց:



ՀԱՅՐԱՊԵՏԱՑ, ՄԱՐԿԱՐԵՒԵՑ ԵՒ ԱՅԼՆ.

Ամենակալ ես, տէր զօրութեանց, +
Որ թագաւորդ ես յաւիտենից,
Որ նըստիս յերկնից ի յերկինս
Եւ լոյս ծագես յարարածքս քո.—

Որ խոնարհութեամբ իջեր ի յերկնից,
Քեզ պատարագքս մատուցանեմք
Եւ սուրբ զանունըդ քո փառաւորեմք,
Տէր, որ պըսակիչդ ես քոյ սըրբոյ (Հայրապետայ)
Վասըն զի ս՛հա է՝ մեզ բարեխօս,
Տէր Ամենակալ, ի քում յարքայութեանդ:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս Ա Ց .

Սըրբութիւն սըրբոց մեծ և ահաւոր
 Եւ զինուորութիւնք հրեշտակաց
 Օրհնեն ըգբեզ և ասեն՝
 Փառք — ի բարձունս Աստուծոյ
 Եւ յերկիր խաղաղութիւնս:

Ն Ն Ջ Ե Ց Ե Լ Ո Ց .

Վասն յիշատակի հանգուցելոց
 Ընկալ հայր սուրբ մարդասէր
 Ըզպատարագս, և՛
 Համարեա զհոգիս նոցա
 Ի թիւս սըրբոց քոց յարքայութեանդ երկնից,
 Մանաւանդ զի հաւատով
 Մատուցուք ըզպատարագս,
 Հաշտեսցի Աստուածութիւնդ
 Եւ հանգուցէ զհոգիս նոցա:

Սրկ. եւ ևս խաղաղութ. . .

Տէր ողորմեա:

Սրկ. եւ ևս Հաւատով. . .

Կեցո տէր և ողորմեա:

Սրկ. - Օրհնեա տէր:
Քհ. - Շնորհօք . . . խաղաղութիւն . . .

Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ. - Աստուծոյ երկը. . . .

Առաջի քո տէր:

Սրկ. - Ողջոյն տուք մկմանց. . .

Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, +
 Որ էնն Աստուած աստ բազմեցաւ.
 Խաղաղութեան ձայն հրնչեցաւ,
 Սուրբ ողջունի հրաման տրլաւ.
 Եկեղեցիս մի անձն եղև,
 Համբոյրըս յօդ լըրման տրլաւ.
 Թըշնամութիւնըն հեռացաւ,
 Սէրն յընդհանուրըս սրփոեցաւ.
 Արդ, պաշտօնեայք, բարձեալ ըզձայն՝
 Տուք օրհնութիւն ի մի բերան.
 Միասնական Աստուածութեանն,
 Որում սրովբէքն են սըրբաբան:



9340

Սրկ.-Սհիւ կացար.բ. . . .

Առ քեզ Աստուած:

Սրկ.-Պատարազ Գրեատ. . .

**Ողորմութիւն և խաղաղութիւն
Եւ պատարազ օրհնութեան:**

Սրկ.-Օրհնեա տէր:
Քհ.-Շնորհք, սէր . . . Ընդ ձեզ. . .

Ամէն, և ընդ հոգեոյդ բում:

Սրկ.-Զգրուես, զգրուես . . .

Ունիմք առ քեզ տէր Ամենակալ:

Սրկ.-Եւ գոհացարու.բ. . .


Արժան և իրաւ:

Սրկ.-Օրհնեա տէր:
Քհ.-Եւ ընդ սերունդսն. . .



Սու——րբ, սու——րբ, +
Սուրբ տէր զօրութեանց,
Լի են երկինք և երկիր փառօք քո,
Երհնութիւն ի բարձունս.
Օրհնեալ, որ եկիր
Եւ գալոցդ ես անուամբ տեառն.
Ովսաննա ի բարձունս:

Սրկ.-Օրհնեա տէր:
Քհ.-Առէք, կերէք. . .



Ա մ է ն:

Սրկ.-Օրհնեա տէր:
Քհ.-Արեւք ի սմանէ. . .

Ամէն. Հայր երկնաւոր, +
Որ զորդիդ քո ետուր ի մահ
Վասըն մեր պարտապան պարտեաց մերոց.
Հեղմամբ արեան նորա
Աղաչեմք ըզքեզ, ողորմեա
Քո բանաւոր հօտի:

Սրկ.-Օրհնեա տէր:
Քհ.-Եւ գրոյս ի քոյոց . . .

Յամենայնի՝ օրհնեալ ես տէր.
 Սրհնեմք ըզբեզ, գովեմք ըզբեզ.
 Գոհանամք ըզբէն, աղաչեմք ըզբեզ
 Տէր Աստուած մեր:

Սրկ.-Օրհնեա տէր:
 Քհ.- Խաղաղութիւն . . .

Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ.-Աստուծոյ երկը . . .

+ Առաջի քո տէր: Որդի Աստուծոյ,
 Որ պատարագեալ Հօր ի հաշտութիւն,
 Հաց կենաց բաշխիս ի մեզ.
 Հեղմամբ արեան քո սուրբ
 Աղաչեմք ըզբեզ, ողորմեա
 Արեամբ քով փրկեալ հօտի:

Սրկ.-Օրհնեա տէր:
 Քհ.-Որպէս զե եղեցի . . .

+ Հոգի Աստուծոյ,

Որ զփառակցի քո զխորհուրդ՝ իջեալ
 Ի յերկնից կատարես ի ձեռքս մեր.

Հեղմամբ արեան սորա
 Աղաչեմք ըզբեզ, հանգո
 Զհոգիս մեր նընջեցելոց:)

Սրկ.-Օրհնեա տէր:
 Քհ.-Ընդ որս և մեզ . . .

Յիշեա տէր և ողորմեա:

Քհ.-Աստուածածնին սրբ . . .

Յիշեա տէր և ողորմեա:

Սրկ.-Օրհնեալ, գովեալ . . .

Փառք յարութեան քո տէր:

{ յայտնութեան
 տէրութեան
 գալըստեան

Սրկ.-Առաջնորդացն և այլն:

Յիշեա տէր և ողորմեա: (Յ անգամ)

(Սրկ.-Ընդհանուր . . . վերջ):

Յիշեա տէր և ողորմեա:

Յամենայնի՝ օրհնեալ ես տէր.
 Սրհնեմք ըզբեզ, գովեմք ըզբեզ.
 Գոհանամք ըզբէն, աղաչեմք ըզբեզ
 Տէր Աստուած մեր:

Սրկ.-Օրհնեա տէր:
 Քհ.- Խաղաղութիւն . . .

Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ.-Աստուծոյ երկը . . .

+ Առաջի քո տէր: Որդի Աստուծոյ,
 Որ պատարագեալ Հօր ի հաշտութիւն,
 Հաց կենաց բաշխիս ի մեզ.
 Հեղմամբ արեան քո սուրբ
 Աղաչեմք ըզբեզ, ողորմեա
 Արեամբ քով փրկեալ հօտի:

Սրկ.-Օրհնեա տէր:
 Քհ.-Որդիս զե եղեցե . . .

+ Հոգի Աստուծոյ,

Որ զփառակցի քո զխորհուրդ՝ իջեալ
 Ի յերկնից կատարեա ի ձեռքս մեր.

Հեղմամբ արեան սորա
 Աղաչեմք ըզբեզ, հանգո
 Զհոգիս մեր նընջեցելոց:)

Սրկ.-Օրհնեա տէր:
 Քհ.-Ընդ որս և մեզ . . .

Յիշեա տէր և ողորմեա:

Քհ.-Աստուածածնին սրբ . . .

Յիշեա տէր և ողորմեա:

Սրկ.-Օրհնեալ, գովեալ . . .

Փառք յարութեան քո տէր:

{ լալտնութեան
 տէրութեան
 գալըստեան

Սրկ.-Առաջնորդացն և այլն:

Յիշեա տէր և ողորմեա: (Յ անգամ)

(Սրկ.-Ընդհանուր . . . վերջ):

Յիշեա տէր և ողորմեա:

ՔՀ.-Չամբնասարերկաշա . . .

Ա մ է ն: Ա մ է ն:

Արկ.-Գոհուլթիւն և փառաք . . .

'Ստամենայնի և յաղագս ամենեցուն:

Արկ.-Օրհնեա տէր:
ՔՀ.-Եւ եղիցի . . .

Ամէն, և ընդ հոգւոյդ քում:

Արկ.-Եւ ևս խաղաղութ. և այլն:

Տ է ը ո ղ ո ը մ ե ա:

Տ է ը ո ղ ո ը մ ե ա:

Տ է ը ո ղ ո ը մ ե ա:

Տ է ը ո ղ ո ը մ ե ա:

Արկ.-Ընկալ կեցո . . .

Կեցո տէր և ողորմեա:

Արկ.-Չամբնասարբուհի և այլն:

Յիշեա տէր և ողորմեա:

Տէր ողորմեա, քեզ տեսունըդ

Յանձն եղիցուք, տէր ողորմեա,

Տէր ողորմեա, տէր ո ղ ո ը մ ե ա:

Արկ.-Օրհնեա տէր:
ՔՀ.-Եւ տուք մեզ . . .

Հայր մեր, որ յերկինս ես,
Սուրբ եղիցի անուն քո,
Եկեացէ արքայութիւն քո,
Եղիցին կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի:
'Ձհաց մեր հանապազորդ
Տուր մեզ այսօր.
Թող մեզ ըզպարտիս մեր՝
Որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց
Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն,
Այլ փրկեա ի չարէ:

Արկ.-Օրհնեա տէր:
ՔՀ.-Ձի քո է . . . Խաղաղութ. . .

Եւ ընդ հոգւոյդ քում:

Արկ.-Աստուծոյ երկը . . .

Ա. ու ա ջ ի ք ո տ է ը:

Արկ.-Օրհնեա տէր:
ՔՀ.-Յիսուսիւ, Քրիստոսիւ . . .
Արկ.-Պաշտուի:
ՔՀ.-Ի սրբութիւն սրբոց:

Միա—յն սուրբ,

Միա—յն տէր:

Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Տօր:

Ամէն:

Սրկ.-Օրհնեա տէր: (3 անգամ):
Քհ.-Օրհնեալ հայր սուրբ և այլն:

Ամէն: (3 անգամ)

Սրկ.-Օրհնեա տէր:
Քհ.-Օրհնութիւն և փառք. . .

Ամէն: Հա—յր սուրբ,

Որդի—դ սուրբ,

Հոգի—դ սուրբ:

Օրհնութիւն Տօր և Որդւոյ

Եւ սրբոյ Հոգւոյն.

Սյժմ՝ և միշտ և յաւիտեանս

Յաւիտենից: Ամէն:

Սրկ.-Օրհնեա տէր:
Քհ.-ի սուրբ, ի սուրբ. . .

Տէր ողորմեա, տէր ողորմեա,

Տէր ողորմեա, տէր ողորմեա,

Տէր ողորմեա, տէր ողորմեա:

Սրի Աստուած հարցն մերոց,

Որ ապաւենդ ես նեղելոց,

Հաս օգնութիւն ծառայից քոց,

Լեր օգնական ազգիս Հայոց:

Միջնորդութեամբ սրբոյ խաչիդ

Եւ անարատ սուրբ ծընողիդ

Յիշեա զհեղումն արեան Փըրկչիդ,

Ե՛լ ի խընդիր փոքու հօտիդ:



Տէր ողորմեա, տէր ողորմեա,

Տէր ողորմեա, տէր ողորմեա,

Շնորհիւ աւուրս մեզ ողորմեա:

Սրկ.-Սուրբ անմահ . .

Յիշեա տէր և ողորմեա:

Սրկ.-Սաղմոս ասացէք . . .

Օրհնեալ է Աստուած:

Քրիստոս պատարագեալ

Բաշխի ի միջի մերում, — ալէլուիա:

Զմարմին իւր տայ մեզ կերակուր

Եւ սուրբ զարին իւր ցօղէ ի մեզ, — ալէ. . . :

Մատիք առ տէր և առէք ըզլոյս, — ալէ. . . :

Ճաշակեցէք և տեսէք,

Զի քաղցր է տէր, — ալէլուիա:

Օրհնեցէք ըզտէր յերկինս, — ալէլուիա:


Օրհնեցէք ըզնա ի բարձունս, — ալէլուիա:

Օրհնեցէք ըզնա ամենայն հրեշտակք նորա,

— ալէլուիա:

Օրհնեցէք ըզնա ամենայն զօրութիւնք նորա,

— ալէլուիա:



Սրկ.-Նրկիւղիւ և հաւատ . . .

Աստուած մեր և տէր մեր երևեցաւ մեզ.

Օրհնեալ, եկեալ անուամբ տեսառն:

Քհ.-Վեցո տէր . . .

Լըցաք ի բարութեանց քոյ տէր,

Ճաշակելով ըզմարմին քո և զարիւն.

Փառք ի բարձունքս կերակրողիդ ըզմեզ:

Որ և հանապազ կերակրես ըզմեզ,

Առաքեա ի մեզ ըզհոգևոր քո զօրհնութիւն.

Փառք ի բարձունքս կերակրողիդ ըզմեզ:

Սրկ.-Նւ և խաղաղութ. . . .

Տէր ողորմեա:

Սրկ.-Նւ և հաւատով . . .

Գոհանամք ըզքէն տէր,

Որ կերակրեցեր ըզմեզ

Յանմահական սեղանոյ քոյ.

Բաշխելով ըզմարմին և զարիւնդ.

Ի փրկութիւն աշխարհի

Նւ կեանք անձանց մերոց:



Սրկ.-Օրհնեա տէր . . .

Քհ.-Որ օրհնես զայնօրիկ.

Օրհնեալ է Աստուած.

Քհ.-Վեցո ժողովուրդս . . . և այլն:

Ամէն: (Յ աստ)

Ամէն. — Եղիցի անուն տեսառն օհնեալ

Յայսրմհետէ մինչև յաւիտեան.

Եղիցի անուն տեսառն օրհնեալ

Յայսրմհետէ մինչև յաւիտեան.

**Եւ եղիցի անուն տեառն օրհնեալ
Յայսլմհետէ մինչև յաւիտեան:**

Քհ. Աստարուհի օրինաց. . .

Սրկ. -Օրթի:

Քհ. -Խաղաղութ. . . .

Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ. -Երկիրդ զածութեամբ լուարուք:

Քհ. -Սրբոյ աւետարանի . . .

Փառք քեզ տէր Աստուած մեր:

Սրկ. -Պուսիսումէ:

Ասէ Աստուած:



Ս Պ Ս Ս Ա Ի Ո Ր Ն Ե Ր Ի Բ Ա Ճ Ի Ն

Բ.

Քահանայի սեղան ըարձրանալու ժամանակ.

Ս Ա Ղ Մ Ո Ս

Պատ արն ինձ Աստուած
Եւ իրաւ արն ինձ ի դատաստանի իմում:

Քհ. -Յազգէ որ . . .

Ի ու Աստուած հզօրիչ իմ ես
Ընդէր մոռացար զիս,
Ընդէր տրտում գնամ ես
Ի նեղել թշնամւոյ իմոյ:



Քհ. -Առաքեա տէր. . .

Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած,
Որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

Քհ. -Խոստովան եղեց . . .

Սրգ, ընդէր տրտում ես անձն իմ,

Կամ ընդէր խռովես զիս,
Յուսա առ Աստուած, խոստովանեա նմա
Փրկիչ երեսաց իմոց Աստուած է:

Քհ.-Փառք հօր. . .

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:
Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք,
Օրհնեսցուք զԱմենակալն Աստուած
Զհայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի,
Որ արժանի արար զմեզ կալի տեղւոջ փառաբանութեան
Եւ երգել զերգս հոգևորս.
Ամենակալ տէր Աստուած մեր՝ կեցո և ողորմեա՛:

Քհ.-ի յարկի սրբ. . . .

(Վարազդուր)

Դպ.-Մեղերի. Բարեխօսութեամբ:

Օրհնեա տէր:

Քհ.-Օրհնեալ թագ. . . .

(Ժամամուտ)

Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք,
Ընկալ կեցո և ողորմեա:
Օրհնեա տէր:

Դպ.-Եւ ընդ . . .

Աստուծոյ երկըրպագեսցուք:


(Ժաշու շարական *)

Օրհնեա տէր:

Պռօսխումէ:

(Վերաբերում)

- 1) Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:
- 2) Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի
Եւ հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ
Զտէր աղաչեսցուք:
- 3) Վասն ամենայն սուրբ
Եւ ուղղափառ եպիսկոպոսաց՝ զՏէր աղ. .
- 4) Վասն հայրապետին մերոյ տեառն (անուսը)
Կենաց և փրկութեան հոգւոյ նորին՝ զՏէր աղ. . .
- 5) Վասն հայրապետաց, քահանայից, սարկա-
ւազաց, դպրաց և ամենայն ուխտի ման-
կանց եկեղեցւոյ՝ զՏէր. . .



*) Ս. Պատարագի արարողութեան շարքը տես՝ „Դպիկներէ բաժ-
ում“ 10-րդ երեսից:

6) Վասն բարեպաշտ թագաւորաց և աստուածասէր իշխանաց, զօրավարաց և զօրաց նոցին՝ զՏէր աղ. . .*)

7) Վասն հոգւոցն հանգուցելոց, որք ճշմարիտ և ուղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին զՏէր աղաչեսցուք:

Եւ ևս միաբան վասն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ զՏէր աղաչեսցուք:

Զաձինս մեր և զմիմեանս տեառն Աստուածոյ Ամենակալին յանձն արասցուք: Ողորմեաց մեզ տէր Աստուած մեր՝ ըստ մեծի ողորմութեան քում ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:

(Ճաշու գիրք)

Ալէլուիա, օրթի:

Երկիւղածութեամբ լուարուք:

Պառօխումէ:

(Ճաշու աւետարան եւ Հաւատամք)

Օրհնեա տէր:

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Եւ ևս հաւատով աղաչեսցուք և խնդրեսցուք

Ի տեառնէ Աստուծոյ և փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ

*) Ուսաստանի հայոց եկեղեցիներում այս Թ-ը հատուածի փոխարէն՝ յիշուում է ուսաց Կայսեր անունը՝ նախ քան հայոց Հայրապետին յիշելը:

Ի ժամու պաշտաման և աղօթից,
Զի արժանի ընդունելութեան արասցէ,
Լուիցէ Տէր ձայնի աղաչանաց մերոց,
Ընկալցի զխնդրուածս սրտից մերոց,
Թողցէ զյանցանս մեր, ողորմեսցի ի վերայ մեր.
Աղօթք մեր և խնդրուածք յամենայն ժամ
Մտցեն առաջի մեծի տէրութեան նորա
Եւ նա տացէ մեզ միաբան միով հաւատով
Արդարութեան՝ վաստակիլ ի գործս բարիս,
Զի զողորմութեան շնորհսն իւր արասցէ
Ի վերայ մեր՝ Տէրն Ամենակալ
Կեցուցէ և ողորմեսցի:



Զժամս սուրբ պատարագիս և գառաջիկայ օրս
Խաղաղութեամբ անցուցանել հաւատով
Ի Տեառնէ խնդրեսցուք:

Զհրեշտակ խաղաղութեան
Պահապան անձանց մերոց՝ ի Տեառնէ . . .

Զքաւութիւն և զթողութիւն
Յանցանաց մերոց՝ ի Տեառնէ . . .

Զսրբոյ խաչին մեծ և կարող
Զօրութիւն օգնութիւն անձանց մերոց՝ ի Տեառնէ. . .

Զանձինս մեր և զմիմեանս Տեառն Աստուծոյ
Ամենակալին յանձն արասցուք. . . (Տես Երես 32)

Օրհնեա տէր:

Աստուծոյ երկըրպագեսցուք:

Օրհնեա տէր:

Մի ոք լերեխայից, մի ոք ի թերահաւատից
եւ մի ոք յապաշխարողաց և յանմաքրից
Մերձեսցի յԱստուածային խորհուրդս:

Սաղմոս ասացէք տեառն Աստուծոյ մերոյ
Դպիրք ձայնիւ քաղցրութեամբ
Ձերգըս հոգևորս:



(Սրբասացութիւններ)

եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

եւ ևս հաւատով և սրբութեամբ կացցուք
Յաղօթս՝ առաջի սրբոյ գեղանոյս Աստուծոյ
Ահիւ, մի խղճիւ և գայթակղութեամբ,
Մի նենգութեամբ, խորամանկութեամբ,
Մի պատրանօք և խաբէութեամբ,
Մի երկմտութեամբ և մի թերահաւատութեամբ,
Այլ ուղիղ վարուք, պարզ մտօք, իմամիտ սրտիւ,

կատարեալ հաւատով, լցեալ սիրով,
Լի և առաւելեալ ամենայն գործովք բարութեան,
կացցուք յաղօթս առաջի սրբոյ սերանոյս Աստուծոյ
եւ գտցուք զողորմութեան շնորհս՝
Յաւուր յայտնութեան և միւս անգամ գալստեան
Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի
կեցուցէ և ողորմեսցի:

Օրհնեա տէր:

Աստուծոյ երկըրպագեսցուք:

Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան
եւ որք ոչ էք կարողք հաղորդիլ
Աստուածային խորհրդոյս՝
Առ դրունս ելէք և աղօթեցէք:

Ահիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարուք կացցուք
եւ նայեցարուք ըզգուշութեամբ:

Պատարագ Քրիստոս մատչի գառն Աստուծոյ:

Օրհնեա տէր:

Ըզգրունս, ըզգրունս՝ ամենայն իմաստութեամբ
եւ ըզգուշութեամբ ի վեր ընծայեցուցէք
Ըզմիտս ձեր՝ աստուածային երկիւղիւ:

եւ գոհացարուք ըզՏեառնէ
Իսլաղով սրբաիւ:

Օրհնեա տէր:

Գլխավոր, սուրբ . . .

Օրհնեա տէր: (4 անգամ)

Աստուծոյ երկըրպագեսցուք:

Օրհնեա տէր: (2 անգամ)

Առաքելոց, սրբոց, մարգարէից, վարդապետաց,
Մարտիրոսաց և ամենայն հայրապետաց սրբոց,
Առաքելագործ եպիսկոպոսաց, երիցանց,
Ուղղափառ սարկաւազաց և ամենայն սրբոց.
Եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս աղաչեմք:

Կերակի և տէրունական տոներն } Օրհնեալ, գովեալ և փառաւորեալ
Հրաշալի և աստուածազարդ յարութեան
Քրիստոսի երկրպագանեմք:
Համ }
Սուրբ և աստուածահաճոյ (անունը)
Որոյ այսօր զյիշատակն կատարեցաք.
Սրբոց տօներն } Եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս աղ...

Առաջնորդացն մերոց և առաջին լուսաւորչացն՝
Սրբոց Թադէոսի և Բարդուղիմէոսի առաքելոցն,
Եւ Գրիգորի Լուսաւորչին, Արիստակէսի, Վրդանէսի,

Յուսկանն, Գրիգորիսի, Ներսիսի,
Սահակայ, Գանիէլի և Խաղայ,
Մեսրոպայ վարդապետին և Գրիգորի Նարեկացւոյն,
Եւ Ներսիսի Կլայեցւոյն, Յովհաննու Որոտնեցւոյն,
Եւ Գրիգորի և Մովսիսի Տաթևացեացն,
Եւ սրբոց Գրիգորիսեանց և Ներսիսեանց,
Հովսեպ և հովուապետացն Հայաստանեայց,
Եղիցի յիշատակ ի սուրբ . . .



Միանձնացելոց սրբոց առաքինասէր
Եւ աստուածուսոյց կրօնաւորացն՝
Պօղոսի, Անտօնի, Պօղայ, Մակարայ,
Ոնովրիոսի, Աբբա Մարկոսի, Սրապիոնի,
Նեղոսի, Արսէնի, Եւագրի,
Պարսամայ, Յովհաննիսեանց և Սիմէօնեանց,
Սքբոց Ոսկեանց և Սուքրիսեանց և ամենայն սրբոց՝
Հարց և աշակերտելոց նոցին՝ ընդ տիեզերս,
Եղիցի յիշատակ . . .

Թագաւորաց հաւատացելոց սրբոց՝
Աբգարու, Կոստանդիանոսի, Տրդատայ և Թէոդոսից,
Եւ ամենայն սուրբ և բարեպաշտ
Թագաւորաց և աստուածասէր իշխանաց.
Եղիցի յիշատակ . . .

Ընդհանուր ամենայն հաւատացելոց՝
Արանց և կանանց, ծերոց և տղայոց

Եւ ամենայն չափու հասակի՝ հաւատով
Եւ սրբութեամբ ի Քրիստոս ննջեցելոցն.
Եղիցի լիշատակ . . .

Օրհնեա տէր:

Գոհութիւն և փառաբանութիւն մատուցանեմք
Քեզ՝ տէր Աստուած մեր, վասն սուրբ և անմահ
Պատարագիս, որ ի վերայ սրբոյ սեղանոյս,
Զի սա մեզ ի սրբութիւն կենդանութեան պարգևեցէ.
Սովաւ շնորհեա՛ զսէր, զհաստատութիւն
Եւ զըղձալի զխաղաղութիւն՝ ամենայն աշխարհի
Սրբոյ եկեղեցոյ *)
Եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց,
Եպիսկոպոսապետին մերոյ և պատուական հայրապետին՝
Ամենայն հայոց Տեառն (անգմբ.)
Եւ քահանայիս, որ զպատարագս մատուցանէ,
(Եւ վասն զօրութեանց և յաղթութեանց
Թագաւորաց քրիստոնէից և իշխանացն բարեպաշտից*)
Աղաչեսցուք և խնդրեսցուք և վասն հոգւոցն հանգուցելոց
Եւս առաւել վասն հանգուցեալ՝
Բաբունապետացն մերոց և շինողաց սուրբ եկեղեցւոյս
Եւ որք ընդ հովանեաւ սորին են հանգուցեալ:
Ազատութիւն եղբարց մերոց գերելոց,

*) Փակագծում եղած հաստատութիւն հայոց եկեղեցի-
ներում երգւում է Հաբապետի անունից առաջ, ուր յիշուում է Ռուսիոյ
կայսեր անունը, վերեւի աստղանիշից յետոյ:

Եւ շնորհ առաջիկայ ժողովրդեանս.
Հանգիստ հաւատով և սրբութեամբ
Ի Քրիստոս կատարելոցն: Եղիցի լիշատակ . . .

Օրհնեա տէր:

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Ամենայն սրբովք, զորս լիշատակեցաք
Եւս առաւելապէս՝ զՏէր աղաչեսցուք:

Վասն մատուցեալ սուրբ և աստուածային պատարագիս,
Որ ի վերայ սրբոյ սեղանոյս՝ զՏէր աղաչեսցուք:

Որպէս զի Տէր Աստուած մեր, որ ընկալաւ ըզսա
Ի սուրբ երկնային և լիմանալի իւր մատուցարանն,
Ըզփոխանակն առաքեսցէ առ մեզ զշնորհս
Եւ զպարգևս հոգւոյն սրբոյ՝ զՏէր աղաչեսցուք:

Ընկալ կեցո՛ և ողորմեա
Եւ պահեա՛ զմեզ Տէր քոյին շնորհիւդ:

Զամենասրբուհի զԱստուածածինն՝ զմիշտ կոյսն Մարիամ
Հանգերձ ամենայն սրբովք լիշելով զՏէր աղաչեսցուք:
Եւ ևս միաբան վասն . . . (Տես երես 32):

Օրհնեա տէր: (2 անգմ):

Աստուծոյ երկրրպագեսցուք:

Օրհնեա տէր:

Պաշտումէ:

Տէր ողորմեա . . . և այլն: (Տես Գողթնեւի բաժին Եր. 25)


Քրիստոս յարեալ ի մեռելոց,

Լոյս ծագեցաւ արարածոց.

Սուրբ յարութեամբդ քո կենարար

Յարո՛ւ և զմեզ ի կեանս անմահ:

Սուրբ անմահ պատարագիս միջնորդութեամբ:



Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ

Դպիրք ձայնիւ քաղցրութեամբ զերգս հոգևորս,

Զի սմա վայելեն սաղմոսք և օրհնութիւնք,

Ալէլուք և երգք հոգևորք.

Պաշտօնեայք, հանդերձ երգովք

Սաղմոս ասացէք և զտէր յերկինս օրհնեցէք:

Երկիւղիւ և հաւատով յառաջ մատիք

Եւ սրբութեամբ հաղորդեցարուք:

(Եւ եթէ հաղորդուող լինի, ասա՛)

Հաւատամք ի Հայր սուրբ Աստուած ճշմարիտ,

Հաւատամք յՈրդին սուրբ Աստուած ճշմարիտ,

Հաւատամք և ի Հոգին սուրբ Աստուած ճշմարիտ.

Խոստովանիմք և հաւատամք, զի սա է ճշմարիտ

Կենդանի և կենդանարար, պատուական մաքուր

Մարմին և արիւն տեառն մերոյ և փրկչին :

Յիսուսի Քրիստոսի, որ բառնայ զմեզս աշխարհի:

Դպ.-Որ կազմեցեր. . Լցաք:

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Եւ ևս հաւատով ընկալեալք յաստուածային

Սուրբ, երկնային, անմահ, անարատ

Եւ անապական խորհրդոյս՝ զտեառնէ գոհացարուք:

Օրհնեա տէր:

(Քահանան իջնում է սեղանից)


Օրթի:

Երկիւղածութեամբ լուարուք:

Պաշտումէ:



Handwritten signature or text in orange ink at the bottom of the page.



Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ծ

Գ.

Հ Ո Գ Ե Ի Ո Ր

Ե Ր Գ Ե Յ Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն

I Ծ Ն Ն Գ Ե Ա Ն

Այսօր տօն է ծընընդեան — աւետիս,
 Տեաւըն մերոյ և յայտնութեան — աւետիս, աւետիս:
 Այսօր արեւն արդարութեան աւետիս
 Երևեցաւ ի մէջ մարդկան—աւետիս, աւետիս:
 Այսօր սուրբ կոյսն անապական — աւետիս,
 Ծընաւ եբեր զանմահ արքայն—աւետիս, աւետիս:
 Այսօր հրեշտակք երկնից իջան —աւետիս,
 Ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն —աւետիս, աւետիս:

Զանապական կոյսըն Մարիամ
 Աստուածածին խոստովանի սուրբ եկեղեցի,
 Ուստի տըլաւ հացն անմահութեան
 Եւ բոժակ մեզ ուրախարար.
 Տնւք օրհնութիւն նըմա հոգևոր երգով: —

Խորհուրդ մեծ և սքանչելի,
 Որ յայսմ աւուր յայտնեցաւ.
 Հովիք երգեն ընդ հրեշտակս,
 Տան աւետիս աշխարհի:
 Ծնաւ նոր արքայ
 Ի Բեթղեհէմ քաղաքի.
 Որդիք մարդկան օրհնեցէք,
 Զի վասըն մեր մարմնացաւ:
 Անբաւելին երկնի և երկրի
 Ի խանձարուրս պատեցաւ.
 Ոչ մեկնելով ի հօրէ՛
 Ի սուրբ այլին բազմեցաւ:

II. Մ Կ Ր Տ Ո Ւ Թ Ե Ա Ն

Ով զարմանալի խորհուրդ այս մեծ յայտնեալ.

Արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ:

Կամէր մկրտիլ ի ծառայէն իւրմէ,

Ձառնոյր Կարապետն ըզմկրտելն ի յանձն:

Յորդանան լուեալ փախտական դառնայր,

Վըտակ առ վըտակ պատգամաւոր լինէր:

Գետ, մի զարհուրիր, քո արարիչն եմ ես,

Եկեալ մկրտիմ և լուանամ ըզմեղս:

Այսօր ձայնըն հայրական

Յերկնից իջեալ հաճոյական

Սիրեցելոյ Որդւոյ վկայն:

Ա՛յ յորդորէ, գետ յորդորէ, գետ Յորդանան

Յորդորական ձայնիւ երգէր

Մեծ Կարապետն Յովհաննէս:

Այսօր երկիրս երկինք եղև

Երևելով Աստուածորդւոյն,

Սիրով եկեալ ի մըկրտիլ:

Ա՛յ յորդորէ, գետ յորդորէ . . .

Այսօր վերին դասք հրեշտակաց

Ուրախացան ընդ սուրբ գալուստ

Աստուածորդւոյն ի Յորդանան:

Ա՛յ յորդորէ, գետ յորդորէ . . .

Այսօր եկեալ Աստուածորդին

Ի Յորդանան խոնարհութեամբ՝

Ջրով մըկրտիլ ի Յովհաննէս:

Ա՛յ յորդորէ, գետ յորդորէ . . .



III. Ջ Ա Տ Կ Ի

Միաշաբաթ օր հանգըստեան—աւետիս,

Կանայք եկին ի գերեզման—աւետիս, աւետիս:

Եւ ողբային արտասուական—աւետիս,

Խնդրել զՅիսուս անապական—աւետիս, աւետիս:

Ձայնեաց հրեշտակն ուրախական—աւետիս,

Ձայն օր եգին ի գերեզման—աւետիս, աւետիս:

Ձեզ աւետիս յարեալ փեսան—աւետիս,

Դրունք զըժօխոց խորտակեցան—աւետիս, աւետիս:



Քրիստոս յարեալ ի մեռելոց,

Մահուամբ ըզմահ կոխեաց

Եւ յարութեամբն իւրով

Մեզ ըզկեանս պարգևեաց.


Նըմա փառք յաւիտեանս. ամէն:



Գովեա Երուսաղէմ ըզտէր:

Յարեալ Քրիստոս ի մեռելոց—ա լ է լ ու լ ի ա:

Եկայք ժողովուրդք երգեցէք տեառն — ա լ է լ ու ի ա :
 Փառք Հօր և Որդւոյ և Հօգւոյն սրբոյ,
 Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն.
 Յարուցելոյն ի մեռելոց — ա լ է լ ու ի ա,
 Որ զաշխարհքս լուսաւորեաց — ա լ է լ ու ի ա :



IV. Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Որ կազմեցեր սեղան խորհրդոյ
 Եւ արբուցեր յանմահական բաժակէն,
 Սըբբոց քոց առաքելոցն
 Այսօր ի սուրբ վերնատանն.
 Աղաչեմք, Փրկի՛չ, ողորմեա՛:

Մաքրեա ըզմիտս և ըզխորհուրդս,
 Զի և մեք հաղորդիցուք սըբբութեամբ,
 Սըբբոց քոց առաքելոց
 Այսօր ի սուրբ վերնատանն.
 Աղաչեմք, Փրկի՛, ողորմեա՛:

Այսօր անճառ լուսոյն ծագումն
 Ի փրկութեան մեր կատարումն
 Խոնարհի ի վերնատունն
 Ի սոււերական տօնից լըրումն.

Նախ քան զընթրիսըն խորհրդոյ
 Սփածաւ ղենթակ արկողն լուսոյ
 Եւ ջուր առեալ ծառայաբար՝
 Զօտրս յուանայր զաշակերտացն:

Բանին Հօր փառաց լուսոյ
 Պետրոս մերձիյ յոտս ոչ ներէր,
 Այնրմ ձեռաց, որոյ են գործք,
 Երկնից երկինք և երկրաւորք,
 Որով կուրաց աչք բացան,
 Խուլք և համերք արձակեցան,
 Որ վերածեաց զինքն ի ծովին
 Սաստեաց այեացն և լրուեցին:

Գրիխոյն բնտրեալ հօտին փոքու
 Սաստէր զխորհուրդն ոչ գիտելոյ,
 Որով զառնայր և հնազանդէր
 Զօտս և ըզգլուխս մաքրել մաղթէր.
 Գըլխոյս, աւէ, չէ ինչ պիտոյ
 Լուսցումըն ջրոյ, զի լուացեալ է,
 Ոտիցըդ պէտք են մաքրութեան՝
 Յօղիլ ի գլուխս սըբբութեամբ:

Դասուց իւրոց աշակերտաց,
 Զոր նախ բանիւ վարդապետեաց,
 Այսօր գործով ըզճայրագոյն
 Եցոյց լինքեան ղխոնարհութիւն.
 Սպասաւորեալ հողեղինաց՝
 Այն որ անտեսն է հրեղինաց,

Տարեալ պաշտօն իւր ծառայից,
Այն, որ պաշտին ի սրովբէից:

Եթէ տէրս, ասէ, էից
Եւ վարդապետըս բուրից,
Չաշակերտացդ և զծառայից
Չոտըս լուացի ի հնոյ աղտից.

Միմեանց և դուք համաբնութեամբ
Յուցէք ըզնոյն խոնարհութիւն,
Բարձրացելոյն ի կործանումն
Եւ անկելոյ բնութեանդ կանգնումն:

Չոր մաքրեցեր յաւազանին

Մաքուր ձեռք զոտըս նոցին,
Եւ ուսուցեր խոնարհութեամբ
Յաղթող լինել չար հըպարտին.

Եւ զիմ լըւայ զտիղմըն մեղաց
Աղաչանօք սրբբոյ գընդին,
Եւ ըզգընացս ուղղեա զոտին՝

Խոնարհութեամբ ելիւք յերկինս:



Վ. Գ Ի Շ Ե Ր Ա Յ Ի Ն Ժ Ա Մ Ո Ի

Առաւօտ լուսոյ

Բըղխումն ի Հօրէ,

Արեգակն արդար,

Բըղխեա՛ ի հոգևոյս

Առ իս լոյս ծագեա՛:

Բան քեզ ի հաճոյս:

Գանձդ ողորմութեան,
Գանձիդ ծածկելոյ,
Գըտող զիս արա:

Դուռն ողորմութեան,
Դաւանողիս բաց,
Դասեցո՛ վերնոցն:

Երբեակ միութիւն
Եղելոց խնամող
Եւ ինձ ողորմեա:

Չարթիր, Տէր օգնել,
Չարթո՛ ըզթըմբեալս՝
Չուարթնոց նըմանիլ:

Եդ Հայր անբսկիղբն,
Եակից Որդի,
Ե միշտ սուրբ Հօգի.

Ընկա՛լ զիս գըթած,
Ընկա՛լ ողորմած,
Ընկա՛լ մարդասէր:

Թագաւոր փառաց,
Թողութեանց տըւող,
Թո՛ղ ինձ ըզյանցանս:

Թողովող բարեաց,
Թողովեա՛ և զիս
Թողովս անդրանկաց:

Ի քէն, Տէր, հայցեմ
Ի մարդասիրէդ՝
Ինձ բըժըշկութիւն:

Լէր կեանք մեռելոյս,
Լոյս՝ խաւարելոյս,
Լուծանող՝ ցաւոյս:

Խորհըրդոց գիտող,
Խաւարիս շնորհեա՛
Խորհուրդ լուսաւոր:

Ծընունդ Հօր ծոցոյ,
Ծածկելոյս ստուերաւ
Ծագեա՛ զլոյս փառաց:

Կենարար փրկիչ,	Հաստեան հաւատով,
Կեցն ըզմեռեալս,	Հաստատեան յուսով,
Կանգնեան ըզգլորեալս:	Հիմնեցն սիրով:

Չախնիւս աղաչեմ,	Ղամպարամբ լուսոյ,
Չեռօքս պաղատիմ,	Ղեկավար ճարտար,
Չիր բարեաց շնորհեան:	Ղօղեալս ամրացն:

Ճառագայթ փառաց,	Միածինըդ Հօր,
Ճանապարհ ինձ ցոյց՝	Մոյժ զիս յաւագաստ
Ճեպել ի յերկինս:	Մաքուր հարսանեացդ:

Յորժամ գաս փառօք	Նորոգող հնութեանց,
Յահագին աւուրն,	Նորոգեան և զիս,
Յիշեան զիս, Գրիստոս:	Նորոգ զարդարեան:

Շնորհատու բարեաց,	Ուրախացն Տէր
Շնորհեան զբաւութիւն,	Ոգւոյս փրկութեամբ,
Շնորհեան զթողութիւն:	Ոյր վասն եմ ի սուգ:

Չար մըշակողին,	Պարպեիչ բարեաց,
Չար սերմանց նորին	Պարգևեան իմոց
Չորացն զպրտուղին:	Պարտեացս թողութիւն:

Ջուր շնորհեան աչացս՝	Ռետինըդ քաղցու,
Ջերմ հեղուլ արտօսը	Ռամ հոգւոյս արբն՝
Ջընջել ըզյանցանս:	Ռահ ցոյց ինձ լուսոյ:

Սէր անուն Յիսուս,	Վասըն գըթութեանդ,
Սիրով քով ճըմլեան	Վասն ողորմութեանդ՝
Սիրտ իմ քարեղէն:	Վերըստին կեցոն:

Տենչալուրդ տեսլեամբ	Րաբունդ երկնաւոր,
Տուր ինձ յագենալ,	Րօտեան զաշակերտս
Տէր Յիսուս Գրիստոս:	Րամից երկնայնոց:

Տօղ արեան քո, տէր,	Իիւծեալըս մեղօք
Տօղեա ի հոգիս,	Իիւծեալ աղաչեմ
Տընծացէ անձն իմ:	Իիւսել ինձ բարիս:

Փրկիչ բոլորից,	Քաւիչ յանցանաց,
Փութա զիս փրկել	Քաւեա զօրհնաբանս,
Փարձութեանց մեղաց:	Քեզ երգել ըզփառս:

Սըրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեամբն
Յիշեա Տէր և ողորմեա:

~~ՀԱՅՏԱՆ~~
+

Մ. Ս. Պ Ս Ա. Կ Ի

Նայեալ ի մեզ . . . և այլն:

Յաղթող և գնոր օրհնութիւն
Սիշտ ի բարձունս երգեսցուք,
Թագաւորին Քրիստոսի
Հաւատացեալ ժողովուրդ:

Որ եկն ի լուսաւորել
Զընտրեալ սուրբ գեկեղեցի
Եւ պլըսակեաց սուրբ խաչին
Նըմա ըզփառս երգեսցուք:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ,
Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:
Այսօր և մեք տօնեսցուք
Զնաւակատիս սուրբ խաչին
Եւ փըրկողին մատուցուք
Փառք և պատիւ յաւիտեան:

Ուրախ լեր սուրբ եկեղեցի,
Քանզի Քրիստոս արքայն երկնից
Այսօր պլըսակեաց ըզքեզ խաչին իւրով
Եւ զարդարեաց զամուրըս քո
Սքանչելի փառօքն իւրովք:
Խընդա յոյժ գուստըր սիովնի,
Քանզի երկիրս երկինք եղև

Այսօր մերըստին քո նորոգմամբ
Եւ թագաւորն երկնաւոր
Հաճեցաւ բընակիլ ի քեզ:
Ընդ դասս երկնաւոր զօրացն
Վեր առեալ տօնեմք քեզ
Այսօր զանդադար փառատըութիւն,
Ուրախ լեր հարսն անարատ
Անքըննին քո խորհրդով:

Ո՛վ երտնելիդ ամենեցուն,
Տիեզերական իշխանութեամբ
Ընկալար ի Քրիստոսէ
Ըզթագ պարծանաց.
Ո՛վ Թեոքոս մեծ թագաւոր,
Վասըն մեր բարեխօսեա
Առ թագաւորըն երկնաւոր:

Որ քոյին սուրբ աղօթիւքդ
Վանեցեր ըզթըշնամին,
Կոխելով ըզսատանայ՝
Ընդ երկնայինսըն՝ զասեցար.
Ո՛վ Թեոքոս մեծ թագաւոր,
Վասըն մեր բարեխօսեա
Առ թագաւորըն երկնաւորն:
Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ,
Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից.
ամէն:

Ուստի և մեք հաւատացեալքս
Տօնեմք ըզքս յիշատակս,
Օրհնութիւն առաքելով
Ըզքեզ պրտակողին.

Ո՛վ Թէոքոս մեծ թագաւոր,
Վասըն մեր բարեխօսեա
Առ թագաւորըն երկնաւորն:

Սիօնի որդիք զարթիք,
Հարսին լուսոյ տուք աւետիք.
Եթէ փեսայն քո յարուցեալ
Յաղթեաց մահու իշխանութեամբ
Գայ պըսակէ ըզքեզ փառօք,
Ե՛յ ընդ առաջ պըճնեալ զարդուք:
Երգեա երգ նոր յարուցելոյն՝
Նընջեցելոց կենաց պըտղոյն:

VI. ՆՆՁԵՑԵԱԼԻ ՅՈՒՂԱՐԿԱԽՈՐՈՒԹԵԱՆ

Աշխարհ ամենայն Գող եղէ մեղաց,
Առ իս նայեցեալ Գըտող կորըստեան,
Ախտակից լերուք: Գուր ինձ փորեցի:
Բանամ ըզըրթունս, Գաւեցի զանձն իմ,
Բարբառիմ լեզուաւս, Գաւաճանեցի,
Բողոքեմ զանձնէս: Գարան գործեցի,
Տէր ողորմեա, տէր ողորմեա, տէր ողորմեա:*)

*) Իւրաքանչիւր 2 ասն վերջը կրկնել:

Երբեմն էի յոյս Երկինք և երկիր
Եւ այժմ եմ իսաւար Եկայք ողբացէք
Եւ ըստուեր մահու: Եղկելի զանձն իմ:
Զի՞նքդ պատմեցից Ընտրեցի ըզչարն,
Զթիւ մեղաց իմոց, Ընկալայ կամաւ
Զի բազում են յոյժ: Ըզհոյլըս մեղաց:

Տէր ողորմ. . . .

Թաթաւիմ տըղմով, Ի բաց մեկնեցայ
Թաւալիմ ի մեղս, Ի սուրբ խորհըրդոց
Թօթափի չկարեմ: Ի բարեաց գործոց:
Ժանտախտիւ լըցեայ, Լաւ վարկաւ անձն իմ,
Ժահահոտ եղէ Լուսոյն հեռանայ,
Ժամանակս բազումս: Լինիլ ընդ խաւար:

Տէր ողորմ. . . .

Խորհուրդքք չարին Կամաւ կորացայ,
Խաբեն ըզհոգիս, Կարկամեալ անձամբ,
Խորասույզ առնեն: Կանգնիլ ոչ կարեմ:
Ծածկեն անդընդօք, Հուր մեղաց կիզող
Ծիծաղին գլորմամբս, Հըրդեհեաց որ լիս
Ծանակ զիս առնեն: Հոգևոր բարիս:

Տէր ողորմ. . . .

Չաղկեցայ մեղօք, Ղեղի դառնութեան
Չաղեցին տեսողք Ղօղեալ ի սիրտ իմ
Չանձրացաւ հոգիս: Ղամպար իմ շիջաւ:

Տէր ողորմ. . . .

ձաշակմամբ մեղաց
ձաշեցի ըզմահ
ձոխս աղքատացայ:

Մեռեալ եմ հոգւովս,
Մոլորեալ մրտօքս,
Միայն կամ մարմնովս:

Տէր ողորմ. . . .

Յորոգայթ մահու
Յորսողին անկայ,
Յողթեցայ յախտից:
Նեւտից թըշնամւոյն
Նըշաւակ եղէ
Նոր միշտ խոցոտիմ:

Շուրջ պատեալ զինև
Շունք բազումք եղեն՝
Շաղտիին արեամբս:
Որս եղէ չարին,
Ուռկանաւ մեղաց
Որսացաւ զանձն իմ:

Տէր ողորմ. . . .

Չարաչար վրշտօք
Չարչարի անձն իմ
Չունիմ դադարումն:
Պարտապան գըտայ
Պաշտուց յանցանաց
Պարտեալս ի մեղաց:

Չանամ զըղջանալ
Չեռանիմ դարձեալ,
Չեռնում հրով մեղաց:
Ռարբի կոչեցայ,
Ռակայ անուանիմ
Ռամկական վարուքս:

Տէր ողորմ. . . .

Սիրով ցանկութեան
Սաստիկ բարկութեամբ
Սիրտ իմ խոցեալ է:
Վիրօք յանցանաց
Վըշտանայ հոգիս,
Վարանեալ շըրջիմ:

Տիրեցին ինձ չարք,
Տարագիր հանին
Տիրական գրրկացն:
Րաբունւոյն բարույ
Րախճական ձայնին
Րոտինս ոչ լուայ:

Տէր ողորմ. . . .

Յանկութիւն չարեաց
Յանկայի դիմօք
Յաւեցոյց զաչս իմ:
Իիւրաքանչիւրոց
Իիւսմամբ խուռն ախտից
Իիւծեալ է հոգիս:

Փութացիր անձն իմ,
Փախչիլ ի չարեաց
Փափագիլ բարեաց:
Քեզ միշտ մերձ ծանիր,
Քուռ մահու եկեալ
Քըննող դատաւոր:

Տէր ողորմ. . . .

Փառաց ի փառքս բարձրանան,
Սջակողմեանքըն վերանան,
Յորժամ լըսեն գերանական
Զայն օրհնութեան ի քէն կոչման,
Նընջեցելոյս մեր լըսեցո
Զաստուածային բարբառըդ քո,
Դասաւորեա ըզսա վերնոցն
Երգել քեզ զփառս ընդ զուարթնոցն:

Ի վերինն Երուսաղէմ
Ի բնակարանքս հրեշտակաց,
Ուր Ենովք և Եղիաս
Կան ձերացեալ աղաւնակերպ
Ի դրախտին Եզեմական
Պայծառացեալ արժանապէս.
Ողորմած Տէր, ողորմեա
Հոգւոցըն մեր նընջեցելոց:

VIII. ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԻ

Ամենազօր Աստուած
 Եւ թագաւոր յաւիտենից,
 Որ ի պատկեր քո երկնաւոր
 Եւ աներևոյթ թագաւորութեանդ
 Հաստատեցեր յերկրի թագաւոր
 (ՉՆԻԿՈՅԱՅ ԱՂԷՔԱՍԱՆՊՐՈՎԻԶՆԻ)
 Ի կառավարել և ի պահպանել
 Ըզքօ ժողովուրդդ.
 Պահեա ըզսա անասան
 Եւ անպարտելի:

Աղբիւր կենաց և պարգևիչ խաղաղութեան
 Եւ զօրացուցիչ քոյոց ծառայից
 Յաւել ըզկեանս խաղաղականս
 Ի քէն պըսակելոյ արքայիս մերոյ
 (ՆՆԻԿՈՅԱՅ ԱՂԷՔԱՍԱՆՊՐՈՎԻԶՆԻ)
 Եւ զօրացօ ի թըշնամեաց պատերազմի՝
 Ի փառս անուանդ
 Եւ ի պայծառութիւն և կեղեցւոյ քոյս սըրբոյ,
 Յորում փառաւորի անդադար
 Տէրութիւնըդ քօ:
 Բարձրացօ, Տէր, և փայլեցօ
 Գաւազան իշխանութեան սորա
 Ընդ ամենայն ծագս երկրի.
 Ընդարձակեա՛ շառաւիղօք

Եւ Հարազատ ժառանգակցօք
 Մինչև ի կատարած աշխարհի.
 Այլև օրհնեա և պահպանեա զամենեսեան,
 Որք ընդ իշխանութեամբ սորին ենթադրին,
 Յորոց փառաւորի անդադար
 Տէրութիւնըդ քօ:
 Թագաւոր երկնաւոր,
 Զեկեղեցի քօ անշարժ պահեա
 Եւ զերկրրայագուս անուանըդ քում
 Պահեա ի խաղաղութեան:



IX. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԻ

Մեբան, - եղբարք սիրելեալք . . .

Օրհնեալ է Աստուած (4 «նգա՛»):

Հայր մեր . . . (Տես երես 23)

Մեբան, - Բարեխօսութեամբ սրբուհւոյ . . .

Ա մ է ն (5 «նգա՛»):

Աստուած Հըզօր Հայր գրթութեան,
 Աղբիւր առատ ողորմութեան,
 Պատճառ Որդւոյն անեղ ծնընդեան
 Եւ սուրբ Հօգւոյն անհաս բըզիման՝
 Ընդ որս մի տէր ի մի հրաման
 Հաստիչ բոյոր եղելութեան,
 Որով յաւէտ փառաբանի
 Երրորդութիւնդ անճառելի:

Որդիդ Աստուած տէր և իշխան
 Նըկարազեր Հօր էութեան,
 Որ ըզպատկեր քո տիրական
 Տեսեալ ի վիհքս կորչատեան
 Զբհանդուրժեալ սէրդ անսահման
 Մերժէր ըզնա ի յաւիտեան,
 Ուստի և մեք փառաւորեմք
 Ըզսէր անունդ անճառելի:

Եյեր ի փայտըն մահաբեր,
 Յոր զփրրկակախ արիւնդ հեղեր,
 Որով ըզմեզ ազատեցեր
 Ի գերողէն և կեցուցեր,
 Ի գերեզման մահու իջեր
 Եւ զմահացեալսն յարուցեր,
 Ընդ որս և մեք փառաւորեմք
 Զտնօրէնութիւնդ անճառելի:

Հոգիդ Աստուած՝ աղբիւր շնորհաց,
 Առատարաշխ և միշտ գըլթած
 Եւ յաւիտեան:
 Ըզմայրըս մեր պայծառացն,
 Զմանկունս սորին քեզ զօրացն,
 Ըզհայրնայետըս մեր կեցն,
 Եւ ի շնորհքս քո փայլեցն,
 Ի փառքս սուրբ Երրորդութեան
 Այժմ և յաւէտ և՛ յաւիտեան:

Եջմիածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նրմա,
 Զայնք հրնչեցին սանդարամեաք յանդընդոց:
 Տեսեալ ըզլոյս մեծ հայրապետին Գրիգորի
 Պատմէր ցընծութեամբ հաւատացեալ արքային:
 Եկայք շինեսցուք սուրբ ըզխորանըն լուսոյ,
 Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի:

X. ԱՌՍՋՆՈՐԴԻ ԸՆԿՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ

Հրաշափառ Աստուած և միշտ բարեխնամող,
 Որ յառաջ գիտութեամբ ըզփըրկութիւն Հայաստանեայց
 Ըսկըզընաւորեալ ի պարթեւական մեղապարտ ազգէն
 Լուսաւորիչ մեզ շնորհեցեր:
 Վասն որոյ բարեխօսութեամբ սորա, Փրկիչ, կեցն ըզմեզ
 Այժմ և ի քո ահաւոր գալըստեանն:

Հրաշալի զարմացմամբ երանելին սուրբ Գրիգոր
 Զանտանելի ըզչարչարանս ի յանձն էառ
 Եւ երեքհընգօք ամօք ի մէջ թուեաւորացն բնակէր
 Սնդընդային տանջանօքն ի վերապին:
 Վասն որոյ բարեխ. . .

Հրաշագործ քո բանիւղ և մեծ ողորմութեամբդ
 Ելեալ բժժըչկէր ըզհարուածեալսն
 Ի դիւբաղիս սաստիցն երկըրպազուս առնելով
 Զամենեսեան սուրբ Երրորդութեանդ:
 Վասն որոյ բարեխ. . .

Ուրախ լեր սուրբ եկեղեցի և այլն (Տէ՛ս Էբ՛ե՛ 52)

Այսօր աստուածութիւնըն զուարճանայ
Նոր հաստատելով գերկիր.
Պարըք սուրբ փառաբանին զըլարթնոց
Եւ մեք ձայնիւ օրհնութեամբ
Զարդարեսցուք սուրբ ըզտօնս:

«Բրիստոս ի մ'էջ»-ից առաջ:

Սրկ.-Որք հաւատով... (Տես Ժամադիքը)

Վեր համբառնամք զաչս ունելով
Եւ պաղատիմք զայս ասելով,
Ըզմեղըս մեր մի լիշեսցես,
Այլ գըթութեամբ քո քաւեսցես.
Ընդ հրեշտակացն օրհնեմք ըզքեզ
Եւ ընդ սրբոց քոց տէր փառք քեզ:

XI ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

Այսօր երկնայիքն ուրախացան
Ընդ երկրաւորացս նորագումն,
Քանզի նորագողն էից՝ Հոգին
Եջ ի սուրբ վերնատունն,
Որով նորոգեցան զասք առաքելոցն:

Այսօր հողանիւթեայ բնութիւնս
Ցընծայ ընդ Հօր հաշտութեան,

Քանզի որ եբարձ զհոգին
Ի մարդկանէ զմարմին եղելոց
Դարձեալ վերըստին ըզնոյն պարգևէ:

Այսօր մանկունք եկեղեցոյ
Տօնեն ցընծութեամբ զգալուստ սուրբ Հոգւոյն,
Որով զարդարեցան ի զգեստս
Լուսափայլս և գերապայծառս,
Երգեն ընդ սրովբէսն զերեքսըրբենին:

Մայր լուսոյն Մարիամ անհարօնացեալ
Օրհնեալդ ի կանայս.
Զլոյն անընտուեր յարգանդի կրեցեր
Օրհնեալդ ի կանայս.
Մը դադարիբ վասն մեր բարեխօսել
Օրհնեալդ ի կանայս:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սշրբոյ
Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:
Ի տաճարի փառաց սրբութեան քո
Քեզ երգեն մանկունք,
Տուր սոցա զառատ քո գողորմութիւն:





XII. Ս. ՎԱՐԳԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐԱՑ

Նորահրաշ պըսակաւոր և զօրագլուխ առաքինեաց,
Վառեցար զինու չոգւոյն արիաբար ընդդէմ մահու.
Վարդան, քաջ նահատակ, որ վանեցեր ըզթըշնամին,
Վարդագոյն արեամբըդ քո պըսակեցեր զեկեղեցի:

Երկնաւոր թագաւորին զինու յալթեալ պատերազմին
Խոհական իմաստութեամբ խոհեմացեալ անճառապէս.
Խորէն խորհըրդական և ծանուցեալ անուն բարի,
Խաչելոյն վըկալ եղեալ հեղմամբ արեան պըսակեցաւ:

Էական բարւոյն զիտմամբ ընդդէմ մեղացն վառեցաւ,
Տարագնաց ելիւք յերկինըս պարակցեալ ընդ անմարմնոցն,
Տաճատ, զարմանալի տաճար եղեալ երրորդութեանն,
Տէրունեան սուրբ խորհըրդոյն տուն և տեղի աբժա-
նացեալ:





9 U P

№ 9340